ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.07.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/164

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ա. Հազեյան» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հազեյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 76.110.1166602)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.06.2021թ. թիվ 26/26-1/9857-2021 գրությամբ «Ա. Հազեյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 08.06.2021թ. թիվ 39/02-27-397

գրության հիման վրա, 17.06.2021թ. թիվ 26/26-1/9857-2021 գրությամբ նախաձեռնել է «Ա. Հազեյան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ա. Հազեյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ա. Հազեյան» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/164 ընթացակարգի շրջանակներում 23.06.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և հայտնել, որ Ընկերության կողմից շտկման արդյունքում ներկայացված Հավելված 1.1-ում տեղի է ունեցել վրիպակ, այն է՝ երաշխիքային սպասարկման ժամկետը նշվել է 2 տարի, մինչդեռ պետք է նշվեր ի սկզբանե հայտով ներկայացված ժամկետը՝ 3 տարի, որը համապատասխանում է հրավերի պահանջին:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2021թ. թիվ 39/02-27-397 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ 2021թ.-ի մայիսի 21-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան, 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 11:00-ին տեղի է ունեցել պոմպի ձեռք բերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/66 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը: «Ա. ՀԱԶԵՅԱՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08424309, Հեռ.՝ +(374) 94-894-449, էլ. հասցե՝ vip-consalt@mail.ru) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված լիազորագրի գործողության ժամկետը նշված չէր, իսկ Հավելված 1.1-ով ներկայացված երաշխիքային սպասարկման ժամկետը հստակ սահմանված չէր:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 31.05.2021թ.-ին համակարգի միջոցով ծանուցմամբ «Ա. ՀԱՋԵՅԱՆ» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Ա. ՀԱՋԵՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին ներկայացվել է շտկված լիազորագիրը, սակայն շտկված Հավելված 1.1-ում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը՝ երաշխիքային ժամկետը ներկայացվել է 2 տարի, մինչդեռ սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվել էր առնվազն 3 տարի:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Ա. ՀԱՋԵՅԱՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Ա. ՀԱՋԵՅԱՆ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում և հրապարակված են տեղեկագրում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/164 ընթացակարգի շրջանակներում 23.06.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/164 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/164 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ա. Հազեյան» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ա. Հազեյան» ՍՊԸ-ի կողմից սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված լիազորագրի գործողության ժամկետը նշված չէ: Հավելված 1.1-ով ներկայացված երաշխիքային սպասարկման ժամկետը հստակ սահմանված չէ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 31.05.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ա. Հազեյան» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլ. հասցեին ներկայացվել է շտկված լիազորագիրը, սակայն շտկված Հավելված 1.1-ում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը՝ երաշխիքային ժամկետը ներկայացվել է 2 տարի, մինչդեռ սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվել էր առնվազն 3 տարի և որոշում կայացրել, հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ սահմանված պահանջը, վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.06.2021թ. թիվ 26/26-1/9857-2021 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 08.06.2021թ. թիվ 39/02-27-397 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել*** է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը</u>***, իսկ հրավերով նախատեսված

դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2.7-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Այսպես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ա. Հազեյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ա. Հազեյան» ՍՊԸ-ի կողմից սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված լիազորագրի գործողության ժամկետը նշված չէ: Հավելված 1.1-ով ներկայացված երաշխիքային սպասարկման ժամկետը հստակ սահմանված չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 31.05.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ա. Հազեյան» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերում նշված էլ. հասցեին ներկայացվել է շտկված լիազորագիրը, սակայն շտկված Հավելված 1.1-ում

արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը՝ երաշխիքային ժամկետը ներկայացվել է 2 տարի, մինչդեռ սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջվել էր առնվազն 3 տարի և որոշում կայացրել, հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ սահմանված պահանջը, վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանություններին, այն է՝ ««Ա. Հազեյան» ՍՊԸ-ի կողմից սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված լիազորագրի գործողության ժամկետը նշված չէ: Հավելված 1.1-ով ներկայացված երաշխիքային սպասարկման ժամկետը հստակ սահմանված չէ», գտնում եմ, որ նշված հիմքերով Ընկերության հայտում անհամապատասխանություններ արձանագրելն իրավաչափ չէ հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: ***Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:***

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված լիազորագրում լիազորագրի ժամկետի նշված չլինելն անհամապատասխանություն արձանագրելու հիմք չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով կարգավորվում է, որ այն ուժը պահպանում է տալու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից Հավելված 1.1-ով ներկայացված երաշխիքային ժամկետի մասով արձանագրված անհամապատասխանությանը, ապա արձանագրում եմ, որ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/66» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով գնման ենթակա ապրանքի երաշխիքային ժամկետ սահմանվել է «առնվազն 3 տարի», և Ընկերությունը հայտով ներկայացված Հավելված 1.1-ով նույնպես առաջարկել է երաշխիքային ժամկետ «առնվազն 3 տարի», որը բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջը, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված լիազորագրում և Հավելված 1.1-ում արձանագրված անհամապատասխանությունների շտկման անհրաժեշտությունը բացակայում էր:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ա. Հազեյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.06.2021թ. թիվ 26/26-1/9857-2021 գրությամբ «Ա. Հազեյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**